# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռումարզի Դսեղ համայնք

## Ո Ր Ո Շ Ու Մ

«14» օգոստոսի 2020թվականի N 72-Ա

### ՌՈՒԲԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ ԵՎ ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով, ՀՀ << Քաղաքացիական օրենսգրքի >> 188-րդ հոդվածով , ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 8-րդ, 11-րդ, 13-րդ կետերով և հաշվի առնելով, որ նշված ինքնակամ վերակառուցած բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Ռուբիկ Սարգսյանի կողմից իր սեփականություն հանդիսացող Դսեղ համայնքի 52փ. 18 հասցեի հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցած /վերակառուցած/ բնակելի տունը՝ ընդհանուր 260,5 քմ արտաքին մակերեսով, բնակելի տան բաց պատշգամբ 173,3քմ, կաթսայատուն 8,9քմ:
2. Նշված բնակելի տունը, բաց պատշգամբը, կաթսայատունը օրինականացման համար ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 13-րդ կետի համաձայն սահմանել վճար՝ 260 161 ՀՀ դրամի չափով:
3. Սույն որոշման 2-րդ կետով սանմանված վճարները Ռուբիկ Սարգսյանի կողմից 60/վաթսուն/ օրյա ժամկետում չկատարելու դեպքում , որոշումը համարվում է ուժը կորցրած
4. Բնակելի տան և զբաղեցրած հողամասին տրամադրել Լոռու մարզ գյուղ Դսեղ փողոց 52, տուն 18 փոստային հասցեն:
5. Վերը նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

6. Նշված բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ քաղաքացի Ռ. Սարգսյանի դիմումը, << Ակա Գրանիտ >> ՍՊԸ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և բնութագիրը, անշարժ գույքի սեփականության թիվ 12042013-06-0004 վկայականը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2020 թվականի N 73

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42, 43 հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով,

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Լոռու մարզի Դսեղ համայնքի 06-035-0130-0004 ծածկագրից տրամադրված 0,1 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողամասին տրամադրել 6 փողոց 87 հող փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

2020թ օգոստոսի 14-ին
գ. Դսեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(+374)98-01-60-90,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» օգոստոսի 2020 թվականի N 74-Ա

## ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.08.2018թ. թիվ 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով և 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավականակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 14.08.2020թ. թիվ ՍՊ//23097-2020 գրության պահանջները և ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի օգոստոսի 18-ի թիվ 01 /107.3.1/08609-2020 գրությունը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր 1.2-1/ պաշտոնի անձնագիրը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Դսեղ համայնքի ղեկավարի 06.08.2018թ. թիվ 42-Ա որոշման N1 հավելվածը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

2020թ. օգոստոսի 18-ին
գ. Դսեղ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝dsegh.tim@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«20» օգոստոսի 2020 թվականի N 75

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42, 43 հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լոռու մարզի Դսեղ համայնքի սեփականատեր Ռոբերտ Խառատյանին պատկանող կադաստրային քարտեզի 06-035-0063-0004 ծածկագրում գտնվող 0,11 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրվել է 26փողոց, 4 տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

2020թ օգոստոսի 20-ին
գ. Դսեղ